ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար օդորակիչների ձեռքբերման
նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/03» ծածկագրով
գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«28» փետրվարի 2024թ.
Ժամը՝ 15:30

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Արմեն Ավետիսյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարար

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/03» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ՆԱՌ-ԱՎ ՍՊԸ-ի և ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման և հայտերի գնահատման արդյունքների վերաբերյալ.

ՆԱՌ-ԱՎ ՍՊԸ-ն և ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել են հայտերում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց.

ՆԱՌ-ԱՎ ՍՊԸ-ի և ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը, այդ թվում eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ընտրված մասնակիցների և մերժված հայտերի վերաբերյալ.

2.1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

- 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով ՆԱՌ-ԱՎ ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 4-րդ չափաբաժնի մասով ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 1-ին չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի, ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ ՍՊԸ-ի, Վեգա ուորլդ ՍՊԸ-ի, Էյչ վի էյ սի սերվիս ՍՊԸ-ի հայտերը մերժել,
- 2-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի, Վեգա ուորլդ ՍՊԸ-ի, ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ ՍՊԸ-ի, Էյչ վի էյ սի սերվիս ՍՊԸ-ի հայտերը մերժել,
- 3-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի, Վեգա ուորլդ ՍՊԸ-ի, ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ ՍՊԸ-ի, Էյչ վի էյ սի սերվիս ՍՊԸ-ի, Փրիթի Ուեյ ՍՊԸ-ի հայտերը մերժել,
- 4-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ ՆԱՌ-ԱՎ ՍՊԸ-ի, Վեգա ուորլդ ՍՊԸ-ի, Էյչ վի էյ սի սերվիս ՍՊԸ-ի, Փրիթի Ուեյ ՍՊԸ-ի հայտերը մերժել:

2.2. 1-ին չափաբաժնի մասով՝ Փրիթի Ուեյ ՍՊԸ-ի, ԼԻԴ ՄԵՉ ՍՊԸ-ի, LA IMPORT LLC-ի, 2-րդ չափաբաժնի մասով՝ Փրիթի Ուեյ ՍՊԸ-ի, ԼԻԴ ՄԵՉ ՍՊԸ-ի, LA IMPORT LLC-ի, 3-րդ չափաբաժնի մասով՝ ԼԻԴ ՄԵՉ ՍՊԸ-ի, LA IMPORT LLC-ի, 4-րդ չափաբաժնի մասով՝ ԼԻԴ ՄԵՉ ՍՊԸ-ի, LA IMPORT LLC-ի աճուրդն ամփոփվելու պահին ներկայացրած գները գերազանցել են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գնման գները, ուստի նշված չափաբաժինների մասով ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են մերժված:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովը որոշեց՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Նորայր Աղամալյան

_____ Անդրանիկ Աբգարյան

_____ Արմեն Ավետիսյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան